




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Հաստատում եմ
Ֆինմոդկամ ՀԱՆՆՍՈՂԻՑԱՆ
28 մայիսի 1932

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

1932 թ. ԱՆՀՏՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ
ՅԵՆՔԱԿԱ ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅՏԱԲԵՐԵԼՈՒ,
ՑՈՒՑԱԿԱԳՐԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

§ 1. Բոլոր կուլակային տնտեսություններն իրենց իրական յեկա-
մունքների համեմատ հարկվում են անհատական կարգով, այլ վոչ ըստ
նորմաների:

§ 2. Տնտեսությունը կուլային է համարվում և անհատական կարգով
հարկվում հետևյալ հատկանիշների վորևե մեկի առկայությամբ դեպ-
քան՝

ա, յեթե տնտեսությունը սխտեմատիկ կերպով վարձու աշխատանք
և կիրառում գյուղատնտեսական աշխատանքների համար, կամ տնայ-
նագործության մեջ և ձեռնարկություններում, բացառությամբ այն
զեպքերի, յերբ վարձու աշխատանք կիրառելը բղխում է գյուղատնտե-
սական զանազան մշակույթների առանձնահատկություններից, կամ
դրադմունքի բնույթից և չի գերազանցում բանվորական ուժը վարձելու
առավելագույն չափից:

Բանվորական ուժ վարձելու առավելագույն չափը, վորն անհատա-
կան կարգով հարկելու հիմք չի ծառայում, բոլոր շրջանների համար սահ-
մանվում է՝

1. հացահատիկային կամ չալթուկագործական տնտեսությունների
համար մինչև 50 վարձու բանվորական ուժ:

2. խաղողագործական տնտեսությունների համար մինչև 125 բան-
վորական ուժ:

3. այգեգործական տնտեսությունների համար մինչև 75 վարձու
բանվորական ուժ:

4. բանջարաբուծական տնտեսությունների համար մինչև 100 վար-
ձու բանվորական ուժ:

5. ծխախոտագործական տնտեսությունների համար մինչև 240 վարձու բանվորական ուր .

6. բամբակագործական տնտեսությունների համար մինչև 150 վարձու բանվորական ուր .

7. անասնապահական տնտեսություններին համար մեկ հովիվ կամ հոտաղ .

8. անասնագործների և արհեստավորների համար մեկ չափահաս բանվոր կամ յերկու աշակերտ, յեթե բանվորին կամ աշակերտին առկա չուլթյունը բոլորում և արտադրության առանձնահատկությունները, այն դեպքերում, յերբ ձեռնարկությունը չունի մեքենայական շարժիչ :

Ծանոթություն 1-ին .—Վորրերին, ալրիններին, հաշմանդամներին և սովորողներին տնտեսություններում, վորտեղ չկան աշխատունակ ողամարդիկ, կամ թե նրանց աշխատունակ ողամարդիկ ծանր հիվանդ են, գտնվում են կարմիր Բանակում, հանքագործներ են, կամ բացակայում են տնտեսությունից դրսի շինարարական աշխատանքներին վրա աշխատելու համար—մեկ մշտական վարձու բանվորին և սահմանված թվով սեղոնային բանվորների որերին թվից վոչ ավելին աշխատանք կիրառելը հատկանիշ չի ծառայում տնտեսությունն անհատական կարգով հարկելու համար : Նույն տնտեսություններում մեկ վարձու բանվորին բանվորական որերից և սահմանված թվով սեղոնային բանվորների որերից վոչ ավելին կիրառելը ևս հատկանիշ չէ անհատական կարգով հարկելու համար :

Ծանոթություն 2-րդ .—Յեթե անասնապահական տնտեսությունն ունի մեկ մշտական հովիվ, կամ հոտաղ և միաժամանակ սպառազործում և սեղոնային 35 բանվորական ուրից ավելի, ապա այդ հանգամանքը հիմք է ծառայում տնտեսությունն անհատական կարգով հարկելու համար :

Ծանոթություն 3-րդ .—Յեթե տնտեսությունն ունի խառն մշակույթի բնույթ, ապա բանվորական ուժ վարձելու առավելագույն չափը սահմանվում է տնտեսության հիմնական գյուղատնտեսության ճյուղին համար նախատեսված քանակով :

բ) յեթե տնտեսությունն ունի աղաց, ձիթհան, դինդ, նորմալով աշխատող ողու գործարան, կորեկաղաց, գլրան, կարտոֆիլի, պտուղների և բանջարեղենի չորանոց, կամ այլ արդյունաբերական ձեռնարկություն, այն դեպքում, յերբ այդ ձեռնարկությունում գործադրվում է մեքենայական շարժիչ :

դ) յեթե տնտեսության մեջ կա այնպիսի ձեռնարկություն, վորը գործադրում է քամու կամ ջրի ուժ, այն դեպքում, յերբ ձեռնարկության տարեկան յեկամուտը 125 ո. ավելի չէ, իսկ ջրաղացին—150 ո. ավելի :

Ծանոթություն 1-ին . Նորմալով աշխատող ողու գործարանները հատկանիշ են ծառայում տնտեսությունը անհատական կարգով հարկելու համար նույնպես այն դեպքում, յերբ տնտեսությունն ողի թորելու և վաճառելու նպատակով հում նյութ է գնում, անկախ նրանից գործադրվում և մեքենայական շարժիչ կամ ջրի ուժ թե վոչ, յեթե միայն տարեկան յեկամուտը 150 ո. ավելի չէ :

Ծանոթություն 2-րդ .—Այն դեպքում, յերբ քամու կամ ջրի ուժով աշխատող ձեռնարկությունը պատկանում է մի բանի տնտեսությունների (համատերերին) ուրիշ հատկանիշների բացակայության դեպքում, անհատական կարգով հարկվում են այն տնտեսությունները, վորոնք իրենց պատկանող ձեռնարկության մասից ստանում են տարեկան 125 ո. ավելի յեկամուտ, իսկ ջրաղացից 150 ո. ավելի յեկամուտ :

դ) յեթե տնտեսությունն ունի արդյունաբերական այնպիսի ձեռնարկություն, վորի միջոցով շահագործում է ջրձակա բնակչությունը, աշխատանքներ հանձնարարելով տներում կատարելու համար, կամ այդ ձեռնարկությունը կապալով տալու միջոցով :

յե) յեթե տնտեսությունը վարձով և տալիս մեքենայական շարժիչներ ունեցող բարդ գյուղատնտեսական մեքենաներ, կամ վարձով աշխատեցնում և այդ մեքենաներն ուրիշ տնտեսությունների համար .

զ) յեթե տնտեսությունը հող և վարձակալում այնպիսի պայմաններով, վորոնք չըջանային հարկային հանձնաժողովի կողմից ստրկացուցիչ են ճանաչված վարձով տրվողների համար .

ե) յեթե տնտեսությունը կրճատելով իր ցանքի տարածությունը, սխտեմատիկորեն վարձով և տալիս կենդանի քաչող ուժն ուրիշ գյուղական տնտեսություններին, պայմանով, վոր տարեկան այդ յեկամուտը 125 ո. ավելի չէ .

ը) յեթե տնտեսությունը վարձավ և տալիս սարքավորված առանձին շենքեր բնակության, կամ ձեռնարկության համար՝ այն դեպքում, յերբ շենքերից ստացած տարեկան յեկամուտը 300 ո. ավելի չէ .

Ամառանոցային վայրերում տնտեսությունները համարվում են կուլակային և հարկվում անհատական կարգով, յեթե ընդհանուր յեկամուտը 700 ո. ավելի չէ, իսկ շենքերը վարձով տալուց յեկամուտը 500 ո. ավելի :

Ծանոթություն 1 .—Ամառանոցային վայրեր են համարվում՝ Դիլիջանը, Ստեփանավանը, Ծաղկաձորը, Ալիբուլաղը, Գորիսը, Նոր-Բալաղետը, Յելենովկան, Ախտան :

Ծանոթություն 2 .—Արդելվում է հարկի յենթարկել անհատական կարգով այն բանվորներին և ծառայողներին, վորոնց հիմ-

11-261039n

նական զբաղմունքն և աշխատանքը, կամ վարձու ծառայությունը և վորոնք ունեն միաժամանակ վորքը գյուղական տնտեսություն, վորպես յեկամտի ոժանդակ աղբյուր, ու բացի այդ սեփական շենքեր, վորոնց չահագործում են վարձով տալու միջոցով: Այդ բանվորները և ծառայողները հարկվում են ընդհանուր կարգով, վորպես աշխատավորական գյուղացիական տնտեսություններ:

Թ) յեթե տնտեսությունն առևտրական կամ արդյունաբերական չահագործման նպատակով վարձակալում և պտղատու ալի, խաղողի ալի և այլ ձեռնարկություններ:

Ծանոթութիւն 1.—Այդիներ և հողի վարձակալության առևտրական կամ արդյունաբերական չահագործման բնույթն ու նպատակը վորոշում են շրջանային հարկային հանձնաժողովները:

Ծանոթութիւն 2.—Վարձակալած այգին չի կարող հատկանիշ լինել տնտեսություն անհատական կարգով հարկելու համար, յեթե տարածությունը մեկ հեկտարից պակաս է:

Ժ) յեթե տնտեսության անդամները պարապում են առևտրով, վաշխառութեամբ, կամ ունեն այլ վոշաշխատավորաբան յեկամուտներ, նույն թվում կրօնական պաշտամունքի ծառայողները, անկախ այդ աղբյուրներից ստացած յեկամուտի գումարից:

§ 3. Անհատական կարգով չեն կարող հարկվել այն անձինք, վորոնք ունեն հիշված հատկանիշներից վորեւ մեկը, բայց գյուղատնտեսութեամբ չեն զբաղվում:

§ 4. Այս հրահանգի § 2-ում մատնանշված հատկանիշները հիմք են ծառայում անհատական կարգով հարկի յենթարկելու համար այն դեպքում, յեթե տնտեսությունն ունի հատկանիշներից վորեւ մեկը հաշվառման պահին (մոմենտին), կամ ունեցել է 1931 թվի ընթացքում:

Ծանոթութիւն.—Յեթե տնտեսությունը 1931 թ. ունեցել է այս հրահանգում մատնանշված հատկանիշներից վորեւ 1-ը, իսկ հաշվառման պահին այդ հատկանիշներն այլևս չունի, ապա այդ տնտեսությունը ևս պետք է հարկվի անհատական կարգով, յեթե միայն նա ապակուլակացված չի յեղել (տես § 7 և ծանոթություն):

§ 5. Այն տնտեսությունները, վորոնք հարկային տարվա ընթացքում ձեռք են բերում կուլակային հատկանիշներ, ինչպես և այն տնտեսությունները, վորոնք հաշվառման ժամանակ թագցրել են իրենց կուլակային հատկանիշները, պետք է հարկվեն անհատական կարգով հայտնաբերելուց անմիջապես հետո:

§ 6. Ապակուլակացված այն տնտեսությունները, վորոնք չունեն թագցրած յեկամուտներ, կապիտալ և գույք գյուղհարկի յեն յենթարկ-

վում աշխատավորական մենատնտեսների համար սահմանված ընդհանուր հիմունքներով, բայց զրկվում են վորեւ արտոնություն ստանալու իրավունքից:

§ 7. Այս հրահանգի § 6-ի կարգով հարկվող՝ ապակուլակացված տնտեսություններ են համարվում այնպիսիք, վորոնց արտադրական բոլոր միջոցները և կապիտալը (ձեռնարկություններ, մեքենաներ, գործիքներ, գույք, բանող անասուններ և այլն) լրիվ չափով յենթարկված են բռնագրավման (կոնֆիսկացիայի), ինչպես և այն տնտեսությունները, վորոնց, համատարած կուլեկտիվացման հիմունքներով ապակուլակացման կարգով, թողնված է գույք և գյուղատնտեսական ինվենտար այնքան, վորքան անհրաժեշտ է հողաբաժինը մշակելու համար:

Ծանոթութիւն.—Ապակուլակացված տնտեսությունների համար սահմանված հարկման կարգը տարածվում է նաև այն կուլակային տնտեսությունների վրա, վորոնք կորցրել են լրիվ չափով իրենց արտադրական բոլոր միջոցները, կապիտալները և գույքը, չնորհիվ բռնագրավման միջոցների կիրառման (հարկեր տուրքեր և տուգանքներ դանձնելու հետևանքով):

§ 8. Այն քաղաքացիներին, վորոնք կհայտնաբերեն կուլակների թագցրած գույքը, կամ ցույց կտան յեկամտի թագցրած աղբյուրներ, տրվում է դրամական վարձատրություն այդ գույքի վաճառքից գոյացած գումարի կամ հայտնաբերված յեկամուտների վրա ընկնող մուծումների 15 %-ի չափով:

Այդ վարձատրությունը գյուղխորհուրդը վճարում է քաղաքացիներին անմիջապես թագցրած գույքի վաճառքից գոյացած գումարներից, կամ հայտնաբերված յեկամուտներից գոյացած մուծումներից:

§ 9. Անհատական կարգով հարկված կուլակային տնտեսությունները զրկվում են հարկային վորեւ արտոնություն ստանալու իրավունքից:

§ 10. Կուլակային տնտեսություններում հավասարապես արհեստահարի է գանձվում գյուհարկի հետ այն բոլոր զբաղմունքների համար, վորոնք արհեստագործական հարկի որեւքի համաձայն յենթակա յեն արհեստահարկի թե՛ շրջանառությունից առկոսային հարաբերությամբ և թե կայուն դրույքներով:

2. ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

§ 11. Անհատական կարգով հարկվող կուլակային տնտեսությունների ցուցակները և նրանց յեկամուտների չափը կաղմում և վորոշում են գյուղխորհուրդները:

Գյուղխորհուրդների կաղմած այդ ցուցակները և վորոշված յեկա-

մուտները չափը պետք է քննութեան առնվեն նաև գյուղի հարկային հանձնաժողովներում, կոլտնտեսականների և մենատնտեսների ակտիվի ժողովներում:

Անհատական կարգով հարկվող տնտեսութեանների ցուցակները վերջնականապես հաստատում են շրջանային հարկային հանձնաժողովները:

Այս կամ այն տնտեսութեան անհատական կարգով հարկելու և յեկամուտը ճիշտ վորոշելու մասին կատկածներ ծագելիս, շրջանային հարկ. հանձնաժողովը կատարում են տնտեսութեան հետազոտում:

§ 12. Կուլակային տնտեսութեաններին լրիվ հայտնաբերելու նպատակով գյուղխորհուրդներն ոգտագործում են գյուղհարկի կամպանիայի անցյալ տարվա նյութերը, ընտրական իրավունքներից զրկված անձանց ցուցակները, մթերման կամպանիաների նյութերը, տեղական հասարակական կազմակերպութեանների նյութերը և այլ տվյալները:

Անհատական կարգով հարկման յենթակա յուրաքանչյուր տնտեսութեան պետք է հարցաքննվի յեկամուտների աղբյուրների մասին, իսկ հարկ յեղած դեպքում այդ նպատակով պետք է կատարվի տնտեսութեան հետազոտում:

Ծանոթութիւն.—Յեթե տնտեսութեան գլխավորը, կամ անդամներից մեկը, չնայած, վոր իր ժամանակ կանչվել է ցուցակագրութեան, բայց չի ներկայացել, նրա բացակայութեանը չպետք է դադարեցնի աշխատանքները: Այդպիսի դեպքերում, հանձնաժողովները բոլոր հաշիվները կատարում են իրենց մոտ յեղած նյութերի, հավաստի աղբյուրներից ստացած տեղեկութեանների հիման վրա:

§ 13. Կուլակային տնտեսութեանների ցուցակները (բարտերը) և նրանց յեկամուտները շրջանային հարկ հանձնաժողովը քննութեան պետք է առնի և հաստատի անսպաժման տվյալ գյուղի խորհրդի նախագահի ներկայութեամբ:

§ 14. Շրջանային հարկհանձնաժողովները ղեկավարելով այս հրահանգում թված հատկանիշներով, պարտավոր են ստուգել յուրաքանչյուր տնտեսութեան ցուցակագրման ճշտութեանը, ինչպես և հաշվառված յեկամուտների լրիվ հայտնաբերումը:

Այդ դեպքում շրջհարկհանձնաժողովները նկատի յեն ունենում կուլտնտեսականների և մենատնտեսների ակտիվի ընդհանուր ժողովների կարծիքը:

§ 15. Անհատական կարգով միջակ տնտեսութեաններին հարկի յենթարկելու դեմ մճուկան պայքար մղելու նպատակով, շրջհարկհանձնաժողովները պարտավոր են ցուցակները (բարտերը) հաստատելուց առաջ

կատարել մանրազննին ստուգում և անհրաժեշտ դեպքերում տեղում պարզել, չեն ցուցակագրվել արդյոք միջակ տնտեսութեաններ:

Ծանոթութիւն.—Ցուցակները քննելուց և ստորագրելուց հետո, շրջանային հարկային հանձնաժողովը կայացնում է իր վորոշումը և նշանակում արձանագրութեան մեջ:

Յեթե շրջանային հարկ. հանձնաժողովը վորոշում է վորեւ տնտեսութեան հանել անհատական կարգով հարկվողների ցուցակից՝ այդ մասին անմիջապես պետք է հայտնի հարկատուին գյուղխորհրդի միջոցով:

Շրջանային հարկ. հանձնաժողովների վորոշումները վերջնական են:

Շրջհարկհանձնաժողովի նախագահի վրա անձամբ դրվում է կուլակային տնտեսութեանների ցուցակները հաստատելու պատասխանատվութեանը:

Շրջգործկոմները պարտավոր են միջակ տնտեսութեաններին անհատական կարգով հարկելու բոլոր դեպքերում հայտնաբերել մեղավորներին և յենթարկել նրանց խիստ պատասխանատվութեան:

3. ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՎՈՂ ՅԵԿԱՄՏԻ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 16. Կուլակային տնտեսութեանների յեկամուտները վորոշելիս հաշվի յեն առնվում և հարկվում են գյուղատնտեսական բոլոր աղբյուրներից ստացվող գումարները, ինչպես և ամեն տեսակի վոչ-գյուղատնտեսական զբաղմունքներից ստացվող գումարները (նույն թվում և այնպիսի յեկամուտները, վորոնք միջակ տնտեսութեաններում հարկման յենթակա չեն, որինակ՝ խոզարուծութեան, թռչնարուծութեան, յերտասարդ անասունների և այլն):

§ 17. Կուլակային տնտեսութեանների գյուղատնտեսութեանից ստացած հարկվող յեկամուտը պետք է վորոշել վոչ թե յուրաքանչյուր ճյուղի յեկամուտները և ծախսերը մանրամասնորեն հաշվելու միջոցով, այլ պետք է հաշվի առնել միայն բոլոր այն պայմանները, վորոնք բարձրացնում են կուլակային տնտեսութեան յեկամուտները (չուկայի սպեկուլյատիվ գները ոգտագործում և այլն):

§ 18. Կուլակային տնտեսութեանների յեկամուտները բոլոր աղբյուրներից հաշվի յեն առնվում իրական չափերով, այլ վոչ ըստ նորմաների: Իրական չափերով յեկամուտները վորոշելու հետևանքով, չուկայում ազատ գներով գյուղատնտեսական մթերքներ վաճառելուց ստացված յեկամուտները չեն առանձնացվում:

§ 19. Կուլակային տնտեսութեանների արհեստավորական և տնայ-

նադրածական ձեռնարկութիւններէնց և այլ զբաղմունքներէնց ստացված յեկամուտները պետք է հաշվել ընդհանուր կարգով, այսինքն ընդհանուր յեկամտից պետք է հանել արտադրական հիմնական չափքերը:

§ 20. Կուլակային տնտեսութիւններում հարկման յեն յենթակա նաեւ այն վոչ-գյուղատնտեսական յեկամուտները, վորոնք ստացվում են հրկային տարում նոր առաջ յեկած աղբյուրներէնց:

Նման դեպքերում տարվա յեկամուտը պետք է վորոշել մոտավոր չափով, յենելով տվյալ վոչ-գյուղատնտեսական զբաղմունքի միջին յեկամտաբերութիւնից:

Որինակ— տնտեսութիւնը մայիս ամսում առաջին անգամ սկսում է զբաղվել սափրիչութեամբ: Սափրիչներէ միջին ամսական յեկամուտը տվյալ վայրում դիցուէ— 100 ռ. յե: Այդ միջին յեկամտաբերութեամբ վորոշվում է տնտեսութեան մայիս—դեկտեմբեր ամիսներէ յեկամուտը $100 \times 8 = 800$ ռ.: Վերջին գումարը միացվում է տնտեսութեան յեկամտին և հարկվում լրիվ չափով:

§ 21. Վոչ-գյուղատնտեսական զբաղմունքներէնց ստացած բոլոր տեսակի յեկամուտները, նույն թիւում նաեւ աշխատավարձը, միացվում է մյուս հարկվող յեկամուտներին լրիվ չափով (100) %-ով, յեթե յեկամուտները ստացող տնտեսութեան անդամները չեն կտրել իրենց կապը կուլակային տնտեսութեան հետ և ունեն այնտեղ հողարածին:

§ 22. Յերեանում, Լենինականում և Ղարաբաղի խայրում քաղաքային հողերում գյուղատնտեսութեամբ զբաղվող կուլակ տնտեսութիւնները յենթակա յեն յեկամտային հարկի: Մյուս բոլոր վայրերում գյուղատնտեսութեամբ զբաղվող կուլակային տնտեսութիւնները յենթակա յեն գյուղհարկի անհատական կարգով:

4. ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿԸ ՀԱՇՎԵԼՈՒ ՅԵՎ ԳԱՆՁԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 23. Անհատական կարգով հարկվող կուլակային տնտեսութիւններէնց հարկը գանձվում է գրույթներէ հետեյալ աղյուսակով:

Տնտեսութեան հարկվող յեկամուտը		Տնտեսութեան հարկի գրույթը	
Միւշէ	500 ռ. յեկամտից	գանձվում է 20%	
500 ռ. ավելի միւշէ	700 ռ. »	100 ռ. + 30%	500 ռ. գերազանց. գում.
700 ռ. »	1000 ռ. »	160 ռ. + 40%	700 ռ. »
1000 ռ. »	3000 ռ. »	280 ռ. + 50%	1000 ռ. »
3000 ռ. »	6000 ռ. »	1280 ռ. + 60%	3000 ռ. »
6000 ռ. »	—	3080 ռ. + 70%	6000 ռ. »

ա) կուլակային տնտեսութեան յեկամուտը (գյուղատնտեսութիւնից և վոչ-գյուղատնտեսութիւնից) վորոշված է 1300 ռ.: Այդ արեւտնտեսութիւնը պիտի վճարի 1000 ռ. յեկամտից 280 ռ. և 1000 ռ. գերազանցող գումարից տվյալ դեպքում 300 ռ. — 50 %, այսինքն 150 ռ.: Տնտեսութեան գյուղհարկը պիտի կազմի $280 \text{ ռ.} + 150 \text{ ռ.} = 430 \text{ ռ.}$:

բ) տնտեսութեան յեկամուտը հավասար է 430 ռ.: Այդ յեկամտից նա պիտի վճարի գյուղհարկ 20 %, այսինքն 86 ռուբլի:

գ) տնտեսութեան յեկամուտը հավասար է 2400 ռ.: Նա պիտի վճարի՝ 1000 ռ. յեկամտից — 280 ռ. և այդ 1000 ռ. գերազանցող յեկամտից, տվյալ դեպքում 1400 ռ. — 50 %-ը, այսինքն 700 ռ.: Տնտեսութեան գյուղհարկի գումարը պիտի կազմի $280 \text{ ռ.} + 700 \text{ ռ.} = 980 \text{ ռ.}$:

§ 24. Անհատական կարգով հարկված տնտեսութիւնները գյուղհարկ վճարում են լրիվ չափով մեկ ժամկետում, այն է՝ 1932 թ. սեպտեմբերի 1-ից վոչ ուշ:

§ 25. Գյուղխորհուրդները և շրջանային ֆինրաթիւնները պարտավոր են ձեռք առնել բոլոր միջոցները կուլակային տնտեսութիւններէ § 25-ում մատնանշված ժամկետում գյուղհարկի և այլ վճարումներէ (ջրային տուրքի, պետապահովագրման գրույթներէ և այլն) գանձումն ապահովելու համար:

Այդ նպատակով պետք է կազմել ազահովագրական (գարանտիայի) գույքի վերգիր, կախնք դնել այն դրամի և գույքի վրա, վորը գտնվում է յերրորդ անձանց մոտ, յեթե պարզվի, վոր դրամը ու գույքը պատկանում են տվյալ կուլակային տնտեսութեանը:

§ 26. Ապահովագրական (գարանտիայի) կուլակային տնտեսութեան գույքի վերգիր գյուղխորհուրդները պարտավոր են կազմել տվյալ տնտեսութեան յեկամուտները հաշվի առնելուց անմիջապէս հետո ձեռք առնելով միաժամանակ միջոցներ, վորպեսզի գույքի թագցում տեղի չունենա:

Գույքի վերգիրը կազմելիս գյուղխորհուրդները պարտավոր են զգուշացնել վճարողին այն պատասխանատվութեան մասին, վորին յենթակա յեն վերջինները վերգրված գույքը վատնելու դեպքում:

5. ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՐՏԵՐԸ ԼՐԱՅՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 27. Անհատական կարգով հարկվող յուրաքանչյուր կուլակային տնտեսութեան համար գյուղխորհուրդները կազմում են առանձին քարտ (շուշակ):

Քարտերը պետք է լինեն միատեսակ և տրվում են տպագրված ձեւով շրջֆինրաթիւններէնց:

Քարտի առաջին յերեսումն անպայման ցույց են տրվում հետևյալ տեղեկությունները՝

ա) տնտեսության շնչերի թիվը, աշխատունակ աղամարդկանց թիվը և աշխատունակ կանանց թիվը:

բ) տնտեսության տիրոջ լրիվ ազգանունը, անունը, հայրանունը և գյուղացուցակի №-ը:

գ) այն կուլակային հատկանիշը, վորը հիմք է ծառայել տնտեսությունը անհատական կարգով հարկելու համար, ըստ վորում ձախ մասում այդ հատկանիշը ընդգծվում է, իսկ աջ մասում տրվում է հատկանիշին վերաբերող մանրամասն բացատրություն և հիմնավորում:

Որինակ՝ տնտեսությունը զբաղվում է առևտրով: Ձախ մասում պետք է ընդգծել «առևտուր» բառը, իսկ աջ մասում պետք է հիմնավորել առևտուրը, ցույց տալով թե վորքան ժամանակ է զբաղվում առևտրով, ինչ է վաճառում, վորտեղից է ապրանք ձեռք բերում, ինչ իրավազիր ունի, իրավազիր №... կամ իրավազիր չունենալու պատճառները և այլն):

Յեթե տնտեսությունը բանեցրել է սեզոնային բանվորներ սահմանած թվից ավելի, ապա այդ հատկանիշը հիմնավորելու բաժնում գյուղ խորհուրդը պիտի անպայման ցույց տա՝ ինչի համար և աշխատեցրել բանվոր (պատճառները) ինչ մշակութիւնների վրա, քանի բանվոր և քանի որ է աշխատեցրել այդ նպատակով և այլն:

Առանց այդ տեղեկությունների փարտերը, ինչպես և առանց ստորագրությունների շրջափռվումին ներկայացրած փարտերը յեկնապահ չեն վերադարձվում՝ լրացումները գյուղերում կատարելու համար:

Քարտի 2-րդ յերեսը հատկացված է տնտեսության յեկամուտների հաշվառման համար:

3-րդ սյունյակում ցույց են տրվում տնտեսության ցանքերի և այլ մշակութիւնների տարածությունները ըստ առանձին տեսակների (տես տողերը) կամ անասունների քանակը: Գյուղատնտեսական հատուկ ճյուղերի անունները և վոչ գյուղատնտեսական յեկամուտների անունները պրվում են համապատասխան տողերում այդ նպատակով հատկացված գծերում (ա, բ, կետերի դիմաց):

22-րդ և 23-րդ տողերը գյուղխորհուրդները չեն լրացնում:

4-րդ սյունյակում ցույց են տրվում յուրաքանչյուր յեկամտի աղբյուրից (ցանքերից, այգիներից, անասուններից) հաշված իրական յեկամտի այն գումարները վոր սահմանում են գյուղխորհուրդը և գյուղի հարկային հանձնաժողովը:

5-րդ սյունյակում ցույց են տրվում նույն աղբյուրների այն իրա-

կան (փաստացի) յեկամուտները, վորը սահմանում է կոլտնտեսականների չքավորների և մենատնտեսների ակտիվի ընդհանուր ժողովը:

6-րդ սյունյակում շրջանային հարկային հանաձնաժողովները նշանակում են նույն աղբյուրների վերջնական յեկամտի այն գումարները, վորոնք յենթակա յեն հարկման:

7-րդ սյունյակում գյուղխորհուրդները կատարում են դանազան նշանակումներ, մասնավորապես յերիտասարդ (փոքրահասակ) խոշոր և մանր անասուններից հաշված յեկամուտների մասին:

§ 28. Յերիտասարդ (փոքրահասակ) անասունների թիվը չպետք է ցույց տրվի 3-րդ սյունյակում: Այդ անասուններին վերաբերվող բոլոր նշանակումները պետք է կատարել 7-րդ (ճանթություն) սյունյակում, իսկ հաշվի առնված յեկամուտները միացնել նույն անասունների մեծահասակների յեկամտին և ցույց տալ 4-րդ, 5-րդ և 6-րդ սյունյակներում:

§ 29. Շրջանային ֆինրաժինները այս հրահանգի հիմունքներով պարտավոր են մանրամասն ցուցումներ տալ գյուղխորհուրդներին՝ թե կուլակային հատկանիշները ձեակերպելու և թե յեկամուտները հաշվի առնելու, ինչպես և քարտերը ճիշտ լրացնելու մասին:

ՖԻՆԺՈՂԿՈՄՍՏԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՍԵԿՏՈՐ



Պետհատի ապարան, Յերևան

Գլուխ 6173 (բ)

Գառվեր 1868

ՀՀ Ազգային ցրադարան
NL0838869

419

11

26103

932

